ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

07.03.13 №3/3.1/2905-13

Ձեր № _____

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
հասարակական կազմակերպության
իրավաբան պարոն Գևորգ Հայրապետյանին
ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր 22.02.2013թ. N 194-ի 5 գրության և ի կատարումն ՀՀ վարչապետի 04.03.2013թ. N02/13.14/2864-13 հանձնարարականի հայտնում ենք, որ ՀՀ 2010, 2011 և 2012 թվականների պետական բյուջեներով հասարակակական կազմակերպություններին նախատեսվել են հատկացումներ հետևյալ ծրագրերով.

1. ՀՀ Նախագահի աշխատակազմի գծով՝ <<Առողջապահություն>> բաժնի <<Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագիր>> և <<Հանգիստ, մշակույթ և կրոն>> բաժնի <<Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին>> ծրագրերով:

2. ՀՀ կառավարության աշխատակազմի գծով՝ <<Հանգիստ, մշակույթ և կրոն>> բաժնի <<Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին >> ծրագրով: Ընդ որում ՀԿ-ները մրցույթի կարգով կարող են իրականացնել նաև պետական պատվերի այլ ծրագրեր: Միաժամանակ հայտնում ենք, որ վերը նշված ծրագրերով՝ առանձին հասարակական կազմակերպություններին գումարների հատկացման վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարող են տրամադրել համապատասխան ՀՀ պետական մարմինները:

Ինչ վերաբերում է հասարակական կազմակերպությունների ցանկի ներկայացմանը, ապա հայտնում ենք, որ ՀՀ Նախագահի աշխատակազմի համար նախատեսված միջոցների հատկացումը հասարակական կազմակերպություններին իրականացվում է համաձայն ՀՀ նախագահի 19.05.2008թ. ՆՀ-118-Ն հրամանագրով հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմին հատկացված միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհներ հատկացնելու մասին>> կարգի՝ մրցույթով:

ՀՀ կառավարության աշխատակազմին նախատեսված միջոցների հատկացումը հասարակական կազմակերպություններին իրականացվում է համաձայն՝ յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումների:

Ներկայացնում ենք <<Հայաստանի Հանրապետության 2010, 2011 և 2012 թվականների պետական բյուջեի մասին >> ՀՀ օրենքով՝ վերը նշված ծախսային ծրագրերի գծով կատարված ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվություն:

Կցվում է մեկ էջ:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Ծախսերի ֆինանսավորման վարչության,
առաջատար. մասնագետ Ռուզան Համբարձումյան
հեռ.595-247, Մուտք Կ/6389-13